

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ

ԵՐԵՎԱՆԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ ԱՆՎԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ЕРЕВАНСКИЙ УНИВЕРСИТЕТ
ИМ. МОВСЕСА ХОРЕНАЦИ

13.01.2014 թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N° 01/401

ԵՐԵՎԱՆԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ N° 01/401 ՆԻՍԻՒ

Նիստին մասնակցում էին գիտ. խորհրդի բոլոր անդամները՝

1. Աղաբաբյան Արթուր
2. Կարագուլյան Հասմիկ
3. Բարսայան Աշոտ
4. Գալստյան Բակուր
5. Թորոսյան Դավիթ
6. Գրիգորյան Պարզև
7. Հակոբյան Գեորգի
8. Հակոբյան Մամիկոն
9. Սահակյան Աննա
10. Սողոմոնյան Մյասնիկ
11. Քթրյան Գագիկ
12. Նիկողոսյան Արամ
13. Մնացականյան Լիլիթ
14. Դավթյան Կարինե
15. Այվազյան Հռիփսիմե
16. Ֆրանգուլյան Մերի
17. Սայադյան Քնարիկ
18. Գասպարյան Սիմոն
19. Ղարագուլյան Լալա
20. Չոլախյան Հասմիկ

Օրակարգում դրված էր՝

1. ԵՄԽՀ-ի կրթական ծրագրի որակի ներքին ապահովման քաղաքականության և ընթացակարգերի հաստատումը:
2. Ֆոկուս խմբերի անցկացումը:
3. Դրամաշնորհի շրջանակներում II եռամսյակի համար նախատեսվող գնումները:
4. Գիտական խորհրդի անդամների փոփոխության հարցը:

Ելույթ ունեցան՝

1. Որակի ապահովման կենտրոնի ղեկավար Գ. Քթրյանը ներկայացրեց կրթական ծրագրի որակի ներքին ապահովման քաղաքականության և ընթացակարգերի նախագիծը:
2. Որակի ապահովման կենտրոնի ղեկավար Գ. Քթրյանը առաջարկեց ուսանողների և դասախոսների շրջանում որակական հետազոտություններ անցկացնելու և անցկացված հարցումների արդյունքների վերլուծության նպատակով անցկացնել ֆոկուս խմբեր:
3. Ռեկտոր Ա. Աղաբաբյանը ներկայացրեց դրամաշնորհի շրջանակներում II եռամսյակում նախատեսվող գործողությունները և այդ գործողությունների իրականացման համար անհրաժեշտ գնումների ցանկը:
4. Գ. Քթրյանը ներկայացրեց, որ գիտական խորհրդի անդամներ Ֆրանգուլյան Մերին, Սայադյան Քնարիկը, Գասպարյան Սիմոնը դիմում են գրել գիտական խորհրդի կազմից դուրս գալու համար, նրանց տեղը մնացել է թափուր և անհրաժեշտ է նոր թեկնածուների առաջադրում: Առաջարկվեց Սարգսյան Տիգրանի, Աղաբաբյան Արմենի, Նավասարդյան Լիլիթի թեկնածությունը:

Որոշեցին՝

1. Հաստատել կրթական ծրագրի որակի ներքին ապահովման քաղաքականության և ընթացակարգերի նախագիծը:
2. ԲՈՒՀ-ում պարբերաբար անցկացնել ֆոկուս խմբեր:
3. II եռամսյակում իրականացնել գնումներ հետևյալ չափով՝

Կահույք – 844.500 (ութ հարյուր քառասունչորս հազար հինգ հարյուր ՀՀ դրամ),

Համակարգիչներ և այլ սարքավորումներ- 3.000.450 (երեք միլիոն չորս հարյուր հիսուն ՀՀ դրամ),

Գրենական պիտույքներ- 79.640 (յոթանասունինը հազար վեց հարյուր քառասուն ՀՀ դրամ),

ՈԱԿ անձնակազմի օտար լեզվի վերապատրաստման համար – 360.000 (երեք հարյուր վաթսուն հազար ՀՀ դրամ),

Խորհրդատվական ծառայություններ ՈԱԿ անձնակազմի և դասախոսական կազմի համար - 148.000 (հարյուր քառասունութ հազար ՀՀ դրամ):

4. Գիտական խորհրդի կազմից հեռացնել Ֆրանգույան Մերիին, Սայադյան Քնարիկին և Գասպարյան Սիմոնին և կազմում ընդգրկել Սարգսյան Տիգրանին, Աղաբաբյան Արմենին և Նավասարդյան Լիլիթին:

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ա. Աղաբաբյան

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՂԱՐ՝

Հ. Կարազույյան